

Տ. ՍԱՍՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՋՄՐՈՒԽՏՅԱՆ

Ծնվել է 1954 թ. հոկտեմբերի 10-ին, Բեյրութում: Ավազանի անունն է Գրիգոր: Նախնական կրթությունն ստացել է նախ հայ Ավետարանական և ապա Վահան Թեքեյան վարժարանում: Այնուհետև ուսումը շարունակել է Հ. Բ. Ը. Մ. Հովակիմյան—Մանուկյան Ազգային երկրորդական վարժարանում:

1970 թ. ուղևորվել է Մայր Հայրենիք և ընդունվել Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1972 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնի օրը, ձեռնադրվել է սարկավագ՝ Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի կողմից:

1975 թ. հոգևոր ճեմարանի հարկի տակ հաջողությամբ պաշտպանելով իր ավարտաճառը՝ «Ֆրիկի բարոյա-խրատական բանաստեղծությունները» թեմայով, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի կարգադրությամբ մեկնել է Կանադայի Տորոնտո քաղաք՝ տեղի համալսարանում կատարելագործելու իր աստվածաբանական ուսումը:

Տ. Սասուն վարդապետը Տորոնտոյում իր գործոն մասնակցությունն է բերել տեղի Հայ Եկեղեցու դպրաց դասի և երիտասարդական կազմակերպության գործունեությանը՝ վարելով զանազան պատասխանատու պաշտոններ: Դասավանդել է տեղի կիրակնօրյա վարժարանում և հայկական դպրոցում:

1982 թ. Սասուն վարդապետը Տորոնտոյից տեղափոխվել է Միացյալ Նահանգների Մասաչուսետս նահանգի Բոստոն քաղաք, ուր ընդունվել է Քեմբրիջի «Եպիսկոպոսական Աստվածաբանական Համալսարան»: Հետևելով համալսարանի աստվածաբանական եռամյա դասընթացներին, այն հաջողությամբ ավարտել է 1985 թ., ստանալով «Աստվածաբանության Մագիստրոսի» աստիճան, մասնագիտանալով Ս. Գրոց և հովվական աստվածաբանության մեջ:

Համալսարանում ուսանելու տարիներին Սասուն վարդապետը ծառայել է նախ Ուոթըրթաունի Ս. Հակոբ եկեղեցում և ապա՝ 1984 թ., Հեյվրհիլի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում:

Շարունակելով իր հասարակական-եկեղեցական գործունեությունը, Տ. Սասուն հայր սուրբը Մասաչուսետսի Ուոթըրթաուն և Քեմբրիջ քաղաքներում հիմնել է «Մեսրոպ Մաշտոց» կրթօջախը՝ կազմակերպելով չափահասների համար հայոց լեզվի, ինչպես նաև հայագիտական այլ առարկաների դասընթացներ:

1985 թ. Սասուն վարդապետը, Վեհափառ Հայրապետի հրավերով, վերադարձավ հայրենիք՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որտեղ հոկտեմբերի 6-ին ԱՄՆ-ի արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի ձեռամբ օծվեց կուսակրոն քահանա:

Ձեռնադրությունից և օրինական-ավանդական քառասունքը անցկացնելուց հետո նշանակվել է ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի Սակրամենտո քաղաքի հոգևոր հովիվ, ուր իր ծառայությունը շարունակում է մինչև այսօր: